

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2022/35Ծ-2»

ք. Երևան

«16» 01 2023թ.

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Ա. Երիցյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱԱԲ ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Բադալյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Մ-1, Երևան-Գյումրի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ 160+200-կմ171+700 հատվածի հիմնանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո 300 օր:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով:

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով:

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին:

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք:

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 3 (երեք) տարին: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 18 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 2 338 850 000 (Երկու միլիարդ երեք հարյուր երեսունութ միլիոն ութ հարյուր հիստոն հազար) ՀՀ դրամ, որից 389 808 334 (Երեք հարյուր ութսունինը միլիոն ութ հարյուր ութ հազար երեք հարյուր երեսունչորս) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուի ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Բ Ա Տ ՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական զանձապետարան
ՀՀ 900011025823
ՀՎՀՀ 02815457
գլխավոր քարտուղար
Ա. Երիցյան



Կ Ա Տ Ա Բ Ո Ղ

«Ա.Ա.Բ. Պրոեկտ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Արաբկիր 39/1 ա
«Արդշինբանկ» ՓԲԸ
ՀՀ 2470100091880010
ՀՎՀՀ 00250339

Տնօրեն

Ա. Բադալյան



ՉԱՓԱԲԱԺԻՆ 2

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

**Մ-1, Երևան-Գյումրի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ
160+200-կմ171+700 հատվածի հիմնանորոգման աշխատանքներ**

ՀՀ դրամ

NN	Աշխատանքների անվանումը	չափման միավոր	Ծավալը	Միավորի արժեքը	Ընդամենը	Տնկալվող կշիռը
1	2	3	4	5	6	7
	I. Հողային աշխատանքներ(փափուկ բնահողում)					
1	10eIV կարգի բնահողի մշակում էքս. 1մ3 շ.տ.տեղափոխում բուլլոգերով 50մ լիցք (հարթում.ջրում. խտացում)	մ ³	1800	2,210.00	3,978,000.00	0.170
2	10eIV կարգի բնահողի մշակում բուլլոգերով տեղափոխում 50մ լիցք (հարթում.ջրում. խտացում)	մ ³	1052	1,410.00	1,483,320.00	0.063
3	10eIV կարգի բնահողի մշակում ձեռքով տեղափոխում բուլլ 50մ լիցք (հարթում.ջրում. խտացում)	մ ³	150.3	7,450.00	1,119,735.00	0.048
4	10e-IV կարգի բնահողի մշակում էքս. 1.0մ ³ շ.տ. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 10 կմ	մ ³	10601	2,670.00	28,304,670.00	1.210
5	10e-IV կարգի բնահողի մշակում բուլլ. տեղափոխում 50մ կուտակումով. բարձում ա/ի էքս. 1.0մ3 շ.տ. և տեղափոխում լցակույտ 10կմ	մ ³	4540	3,020.00	13,710,800.00	0.586
6	10e-IV կարգի բնահողի մշակում ձեռքով. բարձում էքս. 1.0մ ³ շ.տ. ա/ի և տեղափոխում լցակույտ 10կմ	մ ³	200.61	8,510.00	1,707,191.10	0.073
7	Ա/բ ծածկի քանդում. բարձում ա/ի էքս. 1.25մ3 շ.տ. և հմիջ=17սմ տեղափոխում լցակույտ 10 կմ	մ ³	17659.99	2,480.00	43,796,775.20	1.873
	Ընդամենը I			-	94,100,491.30	4.023
	II. Կողային առուների իրականացում			-		-
1	10eIV կարգի բնահողի մշակում ձեռքով և բարձում էքս.0.65մ3 շ.տ. ա/ի վրա. տեղափոխում լցակույտ 10կմ	մ ³	53	8,510.00	451,030.00	0.019
2	10eIV կարգի բնահողի մշակում և բարձում էքս. 0.65 մ3 շ.տ. ա/ի վրա. տեղափոխում լցակույտ 10կմ	մ ³	473	2,750.00	1,300,750.00	0.056
3	9ձ-V կարգի բնահողի փխրեցում մանր պայթանցքային լիցքերով h<0.5մ Ծածկոցներ մետ թիթեղից d=10մմ բեռնավորված բետոնե բլոկներով	մ ³	24.9	15,970.00	397,653.00	0.017
4	Կողային առվի մշակում ձեռքով նախապես փխրեցված 9ձ-V կարգի բնահողում բարձում էքս 0.65մ3 ա/ի վրա.տեղափոխում լցակույտ 10կմ հեռ.	մ ³	9.8	14,740.00	144,452.00	0.006

5	Կողային առվի մշակում նախորոք փխրեցված 9Ճ-V կարգի բնահողում էքս 0.65մ3 շ.տ.. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 10կմ հեռ.	մ ³	40	3,340.00	133,600.00	0.006
6	Կողային առվի ակոսահանում (10eIV կարգի բնահողի մշակում և բարձում էքս. 0.65 մ3 շ.տ. ա/ի վրա. տեղափոխում լցակույտ 10կմ)	մ ³	126	2,750.00	346,500.00	0.015
	Ընդամենը II			-	2,773,985.00	0.119
	III. Կողնակ			-		-
1	Կողնակների իրականացում ավազակոպչային նյութով h=10սմ	մ ²	50841.2	1,030.00	52,366,436.00	2.239
	Ընդամենը III			-	52,366,436.00	2.239
	IV. Երթևեկելի մաս			-		-
1	Մանրահատիկ խիտ տաք ա/բ h=5սմ տիպ "Ե"	մ ²	100228.4	6,350.00	636,450,340.00	27.212
2	Խոշորահատիկ ա/բ h=7սմ	մ ²	100228.4	8,090.00	810,847,756.00	34.669
3	Խճավազային հիմք (C-5) h=20 սմ 100մ ² -ի համար խիճ (40-70)մմ - 10% - 2.6մ3 խիճ (20-40)մմ - 35% - 9.1մ3 խիճ (10-20)մմ - 20% - 5.2մ3 խիճ (5-10)մմ - 10% - 2.6մ3 խիճ (0-5)մմ - 25% - 6.5մ3 (ավազ) ջուր-1.1մ3	մ ²	100228.4	2,560.00	256,584,704.00	10.971
4	Ավազակոպչային շերտ h=10սմ	մ ²	100832.7	890.00	89,741,103.00	3.837
	Գյուղ. տեխ.անցում.միաձույլ բետ. ծածկի կառուցում ամրանավորված մետ. ցանցով կմ 161+300-161+306. կմ 162+641-162+671 . կմ 167+795-167+819 . կմ 169+704-169+716			-	-	-
1	Միաձույլ բետոն B-20 h=20սմ	մ ²	604.3	20,100.00	12,146,430.00	0.519
	Ընդամենը IV			-	1,805,770,333.00	77.208
	V. Իջատեղեր և մուտքեր			-		-
1	10eIV կարգի բնահողի մշակում ձեռքով և բարձում էքս.0.65մ3 շ.տ. ա/ի վրա. տեղափոխում լցակույտ 10կմ	մ ³	23.7	8,230.00	195,051.00	0.008
2	10eIV կարգի բնահողի մշակում և բարձում էքս. 0.65 մ3 շ.տ. ա/ի վրա. տեղափոխում լցակույտ 10կմ	մ ³	291	2,640.00	768,240.00	0.033
3	10e-IV կարգի բնահողի մշակում բուլդ.. տեղափոխում 20մ կուտակումով. բարձում ա/ի էքս. 0.65մ3 շ.տ. և տեղափոխում լցակույտ 10կմ	մ ³	471	2,670.00	1,257,570.00	0.054
4	Ե տիպի մանրահատիկ խիտ տաք ա/բ h=4սմ	մ ²	9012.15	5,090.00	45,871,843.50	1.961
5	Խճավազային հիմք C-5 h=12սմ խիճ (40-70)- 10% - 1.56մ3 խիճ (20-40)- 35% - 5.46մ3 խիճ (10-20)- 20% - 3.12մ3 խիճ (5-10)- 10% - 1.56մ3 խիճ (0-5)- ավազ 25% - 3.93մ3 ջուր-1.1մ3	մ ²	7749.58	1,630.00	12,631,815.40	0.540

6	Ավազակոպճային շերտ h=10սմ (մետ. խող. Տակ AE 530մմ)	մ ³	2.1775	9,220.00	20,076.55	0.001
7	Մետ. խողովակների Ø 530/7մմ տեղադրում	զծմ	33.5	138,990.00	4,656,165.00	0.199
8	Ջրամեկուսացում (2 շերտ տաք բիտումով) (մետ.խողով.)	զծմ	31.1	4,020.00	125,022.00	0.005
9	Միաձույլ բետոնե B-20 զլխամասեր	մ ³	3.2	132,450.00	423,840.00	0.018
10	Գլխամասերի ջրամեկուսացում (2 շերտ տաք բիտումով)	մ ²	12	1,710.00	20,520.00	0.001
11	Ավազակոպճային շերտ h=10սմ (մետ. խող. Տակ AE273մմ)	մ ³	1.178	9,220.00	10,861.16	0.000
12	Մետ. խողովակների Ø 273/5մմ տեղադրում	զծմ	33.4	45,530.00	1,520,702.00	0.065
13	Ջրամեկուսացում (2 շերտ տաք բիտումով) (մետ.խողով.)	զծմ	31	2,080.00	64,480.00	0.003
14	Վաքի և խողովակի միացման միաձ.բետոն B-20	մ ³	0.24	132,450.00	31,788.00	0.001
16	Գոյություն ունեցող խողովակների ապամոնտաժում և վերադարձ սեփականատիրոջը			-	-	-
	> մետ. խող. Ø 0.325մ	զծմ	6	1,480.00	8,880.00	0.000
	մետ խողովակ AE 0.219մ	զծմ	11	1,110.00	12,210.00	0.001
	ա/ց Ø 0.3	զծմ	3	760.00	2,280.00	0.000
	Տեխ անցում Կմ162+654(ձախից). կմ167+806(ձախից). կմ167+807(աջից). կմ169+709(ձախից)			-	-	-
1	Միաձույլ բետոն B-20 h=20սմ	մ ²	387.1	19,890.00	7,699,419.00	0.329
2	Ավազակոպճային շերտ h=10 սմ	մ ³	38.71	8,790.00	340,260.90	0.015
	Գոյություն ունեցող ե/բ ջրընդունիչի մետ ցանցով նորոգում իջատեղում կմ 160+446			-	-	-
1	10eIV կարգի բնահողի մաքրում և բարձում ձեռքով գոյություն ունեցող ջրընդունիչում. ա/ի վրա տեղափոխում լցակույտ 10 կմ	մ ³	3	8,320.00	24,960.00	0.001
2	Գոյություն ունեցող ջրընդունիչի նորոգում միաձույլ բետ. B-20	մ ³	0.3	131,310.00	39,393.00	0.002
3	Իջատեղում գոյ. ունեցող ե/բ 30x34 վաքի մաքրում և բարձում ձեռքով 10eIV կարգի բնահողից. ա/ի վրա. տեղափոխում լցակույտ 10 կմ	մ ³	5	8,000.00	40,000.00	0.002
	Ընդամենը V			-	75,765,377.51	3.239
	VI Մայթեր			-	-	-
1	Գոյություն ունեցող բազալտե 15x30սմ եզրաքարերի քանդում ձեռքով պահեստավորում և նույնի տեղադրում - միաձույլ բետոն B-15 1զծմ-0.035մ3 - ավազակոպճային շերտ h=5սմ-0.0125մ3	զծմ	923	5,330.00	4,919,590.00	0.210
2	Գոյություն ունեցող բազալտե եզրաքարերի 15x30սմ քանդում ձեռքով և վերադարձ սեփականատիրոջը	զծմ	395.83	1,320.00	522,495.60	0.022

3	Նոր բազալտե 15x30սմ եզրաքարերի տեղադրում - միաձույլ բետոն B-15 1գծմ-0.035մ3 - ավազակոպճային շերտ h=5սմ-0.0125մ3	գծմ	424.83	13,290.00	5,645,990.70	0.241
4	Նոր հավաք. բետոն 15x30սմ եզրաքարերի տեղադրում միաձույլ բետոն B-15 1գծմ-0.035մ3 - ավազակոպճային շերտ h=5սմ-0.0125մ3	գծմ	1654.03	8,080.00	13,364,562.40	0.571
5	Միաձույլ B-15 բետոնե եզրաշարի կառուցում 10x20սմ ավազակոպճային շերտ h=5սմ. 1գծմ-0.005մ3	գծմ	2728.73	1,580.00	4,311,393.40	0.184
6	Ծածկի կառուցում h=6սմ բետոնե սալիկներով	մ ²	2656.75	8,520.00	22,635,510.00	0.968
7	Ցեմենտ-ավազային շերտ h=9սմ (30% ցեմենտ. 70% ավազ)	մ ²	2656.75	4,550.00	12,088,212.50	0.517
8	Հատիկավոր ենթահիմք h=12սմ ավազակոպիճ	մ ²	1870.29	1,050.00	1,963,804.50	0.084
9	Ավազային ա/բ h=3սմ	մ ²	1870.29	4,180.00	7,817,812.20	0.334
10	Մետաղական բազրիքների տեղադրում (208.25գծմ. 85հատ)	տ	3.59822	1,115,990.00	4,015,577.54	0.172
11	Բազրիքների կանգնակների ամրացումը միաձույլ բետոնով B-20	մ ³	3.4	84,650.00	287,810.00	0.012
	Թեք հարթակներ (ք. Աշոցք)			-	-	-
1	Բազալտե եզրաշարի տեղադրում 8x20սմ միաձույլ բետոնե հիմք 1գծմ- 0.028մ3 B-15 ավազակոպճային շերտ h=5սմ. 1գծմ-0.009մ3	գծմ	174.58	7,270.00	1,269,196.60	0.054
	Ընդամենը VI			-	78,841,955.44	3.371
	VII. Ե/Բ 30x34սմ վաքեր			-	-	-
1	10e-IV կարգի բնահողի մշակում ձեռքով. բարձում էկս 0.65մ3 շտ ա/ի վրա և տեղափոխում լցակույտ 10կմ	մ ³	9.75	8,240.00	80,340.00	0.003
2	Ավազակոպճային շերտ h=10սմ (վաքի տակ)	մ ³	1.95	9,230.00	17,998.50	0.001
3	Ե/բ 30x34սմ վաքերի տեղադրում B-22.5	գծմ	30	18,930.00	567,900.00	0.024
4	Ջրամեկուսացում	մ ²	37.8	1,710.00	64,638.00	0.003
	Ընդամենը VII			-	730,876.50	0.031
	VIII Դիտահորեր			-	-	-
1	Դիտահորերի բարձրացում միաձույլ բետոնով B-20	հատ	8	13,760.00	110,080.00	0.005
	Ընդամենը VIII			-	110,080.00	0.005
	IX. Նշագծում			-	-	-
1	Նշագծումը տաք թերմոպլաստով ապակե գնդիկների ավելացումով h=3սմ ընդհանուր մակերեսը այդ թվում՝	մ ²	2914.63	13,150.00	38,327,384.50	1.639
	Ընդամենը IX			-	38,327,384.50	1.639
	X. Ճանապարհային նշաններ			-	-	-
1	Նոր ճան. նշանների տեղադրում. այդ թվում՝			-	-	-
2	- նախազգուշացնող	հատ	46	25,020.00	1,150,920.00	0.049
3	- առավելության	հատ	157	30,910.00	4,852,870.00	0.207

5	- թելադրող	հատ	5	30,910.00	154,550.00	0.007
6	- հատուկ թելադրանքի	հատ	50	30,910.00	1,545,500.00	0.066
7	- հատուկ թելադրանքի (անհատական նախագծման)	մ ²	6.3	62,080.00	391,104.00	0.017
8	- տեղեկատվության	հատ	13	10,750.00	139,750.00	0.006
9	- տեղեկատվության (անհատական նախագծման)	մ ²	37.56	62,080.00	2,331,724.80	0.100
	-սպասարկման	հատ	8	35,220.00	281,760.00	0.012
